

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Անկախության 29-ամեայ ճանապարհը

Համաճարակին հետեւանքով՝ մարդկության համար բարդ պայմաններու տակ կը պատրաստուինք նշելու Հայաստանի անկախության 29-րդ տարեդարձը:

1991-ի Սեպտեմբեր 21-ին Հայրենի ժողովուրդը խանդավառ մթնոլորտի մէջ ու ապագայի նկատմամբ մեծ յոյսերով ու սպասումներով «Այո» քուէարկեց անկախության հանրաքուէին՝ հիմը դնելով Հայաստանի երրորդ հանրապետության:

Անցնող մօտ երեք տասնամեակները լի էին վերիվայրումներով, չիրականացած ակնկալիքներով ու յուսախաբուրիւններով: Արձանագրուեցան մաքուր յաղթանակներ ու ակնատես եղանք յաջողութիւններու, որոնք կը շարունակեն յոյս ներշնչել, որ մեր Հայրենիքը կը գտնուի ճիշդ ճանապարհի վրայ ու աշխարհացրի հայութեան ուշադրութիւնը կը շարունակէ սեւեռած մնալ դէպի Արարատ լեռան կողմը:

Անկախ պետականութեան հիմքերը կառուցելու աշխատանքները առաջին օրէն բախեցան ներքին ու արտաքին դժուարութիւններու: Երկրաշարժի վերջերը տակաւին չամոքած, մեզի պարտադրուեցաւ Արցախեան պատերազմը, որ ի գին հազարաւոր զոհերու, անարտեցաւ Հայ ժողովուրդի փայլուն յաղթանակով ու Արցախահայութեան ինքնորոշման իրաւունքի ամրագրումով: Անկախութեան տարիներու մեծագոյն նուաճումը եղաւ այդ՝ երբ մեր ժողովուրդը տասնամեակներու ընթացքին առաջին անգամ ըլլալով կարողացաւ վերատիրանալ ու ընդարձակել իր պատմական հողերու մէկ մասը:

Պատերազմական վիճակին զուգահեռ տեղի ունեցաւ Հայաստանի շրջափակումը ու մենք ապրեցանք մութ եւ ցուրտ տարիներ, շատերուն մղելով արտագաղթելու իրենց հայրենիքէն:

Նոյն տարիներուն սկսաւ սեփականաշնորհման չճորագրաւորուած ու սխալ հիմքերու վրայ դրուած քաղաքականութիւնը, որու պատճառաւ փոշիացաւ երկրի հարստութեան մեծ մասը՝ անցնելով սահմանափակ թիւով մարդոց ձեռքը ու ժողովուրդի մէկ ստուար զանգուածը մատնուեցաւ աղքատութեան:

Ասոնց յաջորդեցին քրեալիկարիստիկ համակարգի մը ի յայտ գալը ու իշխանութեան բռնազաւթումը՝ քսան երկար տարիներ, որոնց ընթացքին վերացան անկախութեան առա-

Շար.ը էջ 5

Զօհրայ Մնացականեան Հանդիպած է Եգիպտոսի Նախագահին Հետ



Զօհրայ Մնացականեան Գահիրէի մէջ հանդիպում կ'ունենայ Եգիպտոսի նախագահ՝ Ապտըլ Ֆաթթահ Ալ Սիսիի հետ

Պաշտօնական այցով Եգիպտոս գտնուող Հայաստանի արտաքին գործոց նախարար՝ Զօհրայ Մնացականեան Սեպտեմբեր 14-ին հանդիպած է Եգիպտոսի Արաբական Հանրապետութեան նախագահ՝ Ապտըլ Ֆաթթահ Ալ Սիսիի հետ: Հայաստանի ԱԳՆ-ը կը յայտնէ, որ Մնացականեան վերահաստատած է հայկական կողմի պատրաստակամութիւնը քայլեր ձեռնարկելու հայ-եգիպտական համագործակցութեան առաւել ընդլայնման եւ ամրապնդման շուրջ: Որպէս համագործակցութեան գերակայ ուղղութիւններ՝ գրուցակից-

ները առանձնացուցած են տեղեկատուական արհեստագիտութեան, էլեկտրոնային կառավարման, դեղագործութեան, զբօսաշրջութեան եւ գիտակրթական ոլորտները:

Հայաստանի ԱԳ նախարարը եւ Եգիպտոսի նախագահը բարձր գնահատած են աւանդական բարեկամութեան եւ փոխադարձ յարգանքի վրայ հիմնուած հայ-եգիպտական յարաբերութիւնները՝ արժեւորելով եգիպտահայ համայնքի կամրջող դերակատարութիւնը երկու երկիրներու եւ ժողովուրդներու

Շար.ը էջ 6

Մաքրոն. «Երտողանի Կառավարութեան Գործողութիւնները Մեծ Պետութեան Յարիւր Չեն»

Ֆրանսական Քորսիքա կղզիին մէջ տեղի ունեցած Միջերկրական ծովու աւազանի եւրոպական եօթ պետութիւններու՝ Ֆրանսայի, Իտալիոյ, Սլովենիոյ, Փորթուգալի, Յունաստանի, Կիպրոսի եւ Մալթայի ղեկավարներու գագաթնաժողովը:

Ֆրանսայի նախագահ՝ Էմանուէլ Մաքրոնի խօսքով՝ օրակարգային գլխաւոր թեման Միջերկրական ծովու ուժանիւթով հարուստ արեւելեան հատուածին մէջ թուրքիոյ գործողութիւններու զսպման հարցն է:

«Թուրքիան Կիպրոսի բացառիկ տնտեսական գոտին ներս հորատման գործողութիւններ կը կատարէ, ինչ որ անընդունելի է: Գործ ունինք իրար յաջորդող սադրանքներու հետ, ինչ որ յարիւր չէ (Թուրքիոյ նման) մեծ պետութեան: Երբ մենք կը խօսինք Միջերկրական ծովի մէջ խաղաղութեան հաստատման մասին, պէտք է կարողանանք թուրքիոյ հետ համակցութեան որոշակի ձեւ գտնել: Անոր հետ մէկտեղ, մենք՝ եւրոպացիներս, նախագահ էրտողանի կառավարութեան հետ յարաբերութեանց մէջ պէտք է յստակ եւ վճռական պահելաձեւ որդեգրենք:



Ֆրանսայի նախագահ՝ Էմանուէլ Մաքրոն

Այդ, սակայն, կը վերաբերի կառավարութեան, բայց ոչ թրքական պետութեան կամ ժողովուրդին», - յայտարարած է Մաքրոն՝ նշելով, որ Ֆրանսան Անգարայի հետ յարաբերութիւններու լարումը աւելցնելու նպատակ չունի:

«Մենք կը ցանկանք խուսափիլ իրադրութեան հետագայ լարումէն: Սակայն, այդ չի նշանակեր, որ մենք կրաւորական կամ հանդուրժող դիրք պիտի գրաւենք», - նշած է Մաքրոն:

«Հայաստան» Հիմնադրամը \$412,000 Փոխանցած է Լիբանանի Հայութեան

«Հայաստան» համահայկական հիմնադրամը ամփոփած է «Անյետաձգելի օգնութիւն լիբանանահայերուն» դրամահաւաք արշաւը, որու հետեւանքով հաւաքագրուած էր շուրջ 312 հազար տոլար:

«Հանգանակութիւնը փոխանցելիս, դրամահաւաք-արշաւին միացաւ նաեւ «Տաշիր» բարեգործական հիմնադրամը՝ նուիրաբերելով 100,000 ԱՄՆ տոլար: Այսպիսով, հաւաքագրուած գումարը կազմում է 412,000 ԱՄՆ տոլար, որից 310,000 տոլարը համամասնաբար բաշխուում է Լիբանանում գործող կրթական հաստատութիւնների ուսուցիչներին 2020-2021 թուականներուն ուսումնական տարուայ 1-ին եռամսեակի աշխատավարձ վճարելու նպատակով: Աւելացուած 100,000 տոլարը կը տրամադրուի կրթական ծրագրերի իրականացմանը: Միեւնոյն ժամանակ, հաւաքագրուած գումարից 13,000 տոլար կը տրամադրուի Լիբանանում գործող «Արարատ», «Ջարթօնք», «Ազգակ», «Վանայ Ջաջն», «Ռատիօ Սեւան» լրատուամիջոցներին», - ըստած է հիմնադրամի տարածած հաղորդագրութեան մէջ:

«Լիբանանահայերը մշտապէս մեծ նուիրումով սատարել են թէ՛ հայրենիքին, թէ՛ սփիւռքի համայնքներին: Այժմ մեր գործելու ժամանակն է: Հանգանակուած գումարը որոշ չափով կը թօթափէ ընկերա-տնտեսական դժուարութիւնները», - նշած է «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէն Հայկակ Արշամեան:

Պաքու Կը Բողոքէ՝ Լիբանանահայերու Վերաբնակեցումը Արցախի Մէջ

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը դիմած է ԵԱՀԿ Մինսքի խումբին՝ կոչ ուղղելով միջոցներ ձեռնարկելու «Ատրպէյճանի գրաւեալ տարածքներու անօրինական բնակեցումը կանխելու ուղղութեամբ»:

«Հայաստանը, օգտուելով Լիբանանի մէջ տեղի ունեցած ողբերգութեան, սկսած է լիբանանահայերը վերաբնակեցնել Ատրպէյճանի միջազգայնօրէն ճանաչուած տարածքները հանդիսացող Լեռնային Ղարաբաղի եւ յարակից շրջաններուն մէջ», - նշուած է Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութեան տարածած յայտարարութեան մէջ:

Յայտնենք որ, Պէյրութի նաւահանգիստին ներս տեղի ունեցած հսկայ պայթումէն ետք, մօտ հազար Լիբանանահայեր տեղափոխուած են Հայրենիք: Անոնցմէ ոմանք հաստատուած են Արցախ:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԲՅԿ-Ը Արգելք է Քաղաքական Ռեֆորմացիայի Ծանապարհին. Ինչ Կորոշի Նիկոլ Փաշինեանը

ՅԱԿՈՒ ԲԱՂԱԵԱՆ

Պե՛կ քննչական վարչութիւնում քննուող քրէական գործի շրջանակում ստացուել են փաստական տուեալներ, որ Արարատցեմենտ գործարանի աշխատակիցներին աշխատանքից ազատման սպառնալիքով ստիպել են քուէարկել ԲՀԿ օգտին՝ 2012 թուականի խորհրդարանի ընտրութեանը: Փաստացի, դա ԲՀԿ օգտին ընտրական շաշառքի վերաբերեալ նոր քրէական գործ է:

Ինչ դատական ճակատագիր են ունենալու այդ գործերը, ցոյց կը տայ ժամանակը:

Հանրային մակարդակում քչերն են կասկածում Հայաստանում ընտրակաշառքի համատարած աւանդոյթին, որ եղել է նախկին համակարգի օրօք: Իսկ ԲՀԿ-ն նախկին համակարգի երկրորդ ուժն էր, որ ստեղծուեց 2006 թուականին՝ 2007-08 ընտրական փուլին ընդառաջ: Այդ քաղաքական նախագիծը, ինչպէս առիթ եմ ունեցել մեկնաբանել բազմիցս, Ռոբերտ Քոչարեանի յետնախագահական քաղաքական ծրագրերի առանցքն էր, որի միջոցով երկրորդ նախա-

գահը կամ պլանաւորում էր մնալ վարչապետի կարգավիճակում՝ յետոյ «Պոստին-Մեդեդե» փոխատեղման մեխանիզմ կիրառելու ակնկալիքով, կամ մնալ վարչապետ՝ յետոյ խորհրդարանական կառավարման անցնելու ակնկալիքով, կամ պարզապէս՝ հեռանալ, բայց ձեւաւորել իր, ոչ թէ Սերժ Սարգսեանի եւ ՀՀԿ իշխանութիւնը:

Գազիկ Մառուկեանն այդ առումով թերեւս «ոսկէ ընտրութիւն» էր: «Ոսկէ» առաջին հերթին իր ապաքաղաքական բնոյթի իմաստով: Դա բաւական դիւրացնում էր նրա միջոցով քաղաքական պլաններ առաջ տանելու հնարաւորութիւնը, ուսկի՛հ հիմնական բաժնեմասը թողնելով նրա վրայ: Նրա վրայ էր իհարկէ նաեւ խոշոր քաղաքական ծրագիր առաջ մղելու ֆինանսական մեծ բաժնեմասը, սակայն այստեղ գործում էր այն տրամաբանութիւնը, որ Մառուկեան իր մեծ ֆինանսական կարողութեան համար պարտական է նաեւ օրուայ իշխանութեանը, նախագահին, քանի որ Հայաստանում հնարաւոր չէր դառնալ խոշոր մեծահարուստ առանց քաղաքական աջակցութեան:

Մառուկեանը գուցէ այլ կարծիքի կը լինի, բայց այն, որ նա ճանաչում էր Ռոբերտ Քոչարեանին որպէս անվերապահ հեղինակութիւն, անվիճելի է: Ռոբերտ Քոչարեան իր հերթին չունէր յետիշխանական քաղաքական ծրագրեր ու շահեր սպասարկելու այլընտրանք, չունէր այլ ելք, քան այն մեխանիզմը, որ գործի դրուեց ԲՀԿ միջոցով: Այլընտրանքը իշխանութիւնը պարզապէս պահելն էր, ինչը թոյլ չէր տա Սերժ Սարգսեանը, որը համբերատար սպասում էր իր ժամին՝ նպաստելով Ռոբերտ Քոչարեանի իշխանութեան ամրութեանը:

Սարգսեանը թոյլ չտուեց նաեւ ԲՀԿ «հարքով» իրեն շրջանցելը: Բայց նուազագոյնը Ռոբերտ Քոչարեանը պահեց՝ ԲՀԿ միջոցով ներքաղաքական գործընթացի վրայ առաւելագոյն ազդեցութեան հնարաւորութիւնը: Սերժ Սարգսեանի համար դա խնդիր էր, միւս կողմից սակայն թոյլ էր տալիս նաեւ լուծել մի շարք ներքին ու արտաքին հարցեր:

2015 թուականին Սարգսեանը ԲՀԿ առաջ դրեց Ռոբերտ Քոչարեանի հարցը եւ հեռացրեց

Մառուկեանին ակտիւ քաղաքականութիւնից, չունենալով սակայն խնդիրը հիմքից լուծելու հնարաւորութիւն, քանի որ իր հերթին ունէր լեգիտիմութեան մեծ խնդիր: 2017 թուականի անադմուկ ընտրութեան համար Սերժ Սարգսեանը դիմեց Մառուկեանի «օգնութեանը»:

Այդպիսով, Հայաստանի քաղաքական համակարգում ձեւաւորուեց մի գործօն, որն իր բացարձակ ապաքաղաքական բնոյթով գերազանցում է անգամ ՀՀԿ-ին, միաժամանակ կապուած է նրան «համատեղ յանցանքի» թելով: Այդ գործօնը, որ տեւական ժամանակ կատարում էր բուֆերի գործառնոյթ նախկին ոչ լեգիտիմ համակարգի եւ Հայաստանի պետական շահի միջոց, յեղափոխութիւնից յետոյ յայտնուել է այլ վիճակում՝ այն կանգնած է քաղաքական ռեֆորմացիայի ճանապարհին: Ընդ որում, ակնառու է, որ այդ արգելքը հեռացնելու հնարաւորութիւն ունի միայն քաղաքական նոր իշխանութիւնը:

Թէեւ, Նիկոլ Փաշինեանը կարող է ընտրել այլ տարբերակ եւ Գազիկ Մառուկեան «քաղաքական գործօնից» փորձել քաղել իր առաւելագոյն քաղաքական դիւլիդենտը, ինչը իրենց հերթին արել են Հայաստանի նախկին երեք նախագահները: Ամբողջ հարցն այն է, թէ կա՞ց քաղելու բան, մնացե՞լ է, եւ ի՞նչ որակ է այն քաղաքական էֆեկտիվութեան եւ հեռանկարի իմաստով:

«ԼՐԱԳԻՐ»

«Թէժ Աշնան» Դեմ Նիկոլ Փաշինեանի Ներքին Ու Արտաքին Բազմաֆունկցիոնալ Միջոցը

ԱՐԱՍ ԱՄԱՏՈՒՆԻ

Հայաստանի հանրային-քաղաքական կեանքում սպասուած է Ապրիլեան քառօրեայ պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող յանձնաժողովի գեկոյցը, որն, իհարկէ, հրապարակային տիրոջ թուում հասանելի է լինելու մասամբ, սակայն, անկասկած, բոլոր դէպքերում էական ազդեցութիւն է ունենալու աշնանային քաղաքական օրակարգի ձեւաւորման վրայ: Այդ իմաստով, Ապրիլեան քառօրեայ յանգամանքներն ուսումնասիրող յանձնաժողովի գեկոյցը որոշակիօրէն ստացուած է իշխանութեան հակաքայլը ընդդիմութեան նախաձեռնութիւնների ֆոնին: Նկատելի է, որ կառավարութեան, նոր իշխանութեան ընդդիմախօսները փորձելու են աշունը «թէժացնել» սոցիալական եւ, այսպէս ասած, ազգային ասպեկտներով, շեշտը դնելով տնտեսական ծանր վիճակի վրայ, որ բխում է կորոնավիրուսի համավարակից, եւ կրթական ոլորտում նոր չափորոշիչների, դրա վրայ էլ կառուցելով «ազգային» ասպեկտը:

Քաղաքական մեծամասնութիւնը փաստացի պատասխանում է Ապրիլեան քառօրեայ պատերազմի օրակարգով: Ընդ որում, այստեղ ոչ մի էական նշանակութիւն չունի, թէ ինչպիսին է լինելու յանձնաժողովի եզրակացութիւնը, այն հաստատելու է անցնող չորս տարիներին հնչող տարաբնոյթ մեղադրանքները ամբողջութեամբ, մասնակի, թէ՛ ընդհանրապէս հերքելու է դրանք, բերելու է նոր մեղադրական հիմքեր, թէ՛ ոչ, տալու է քրէական գործերի առիթ, թէ՛ ոչ:

Խօսքն, իհարկէ, բացարձակ նշանակութիւն չունենալու մասին չէ, քանի որ, անշուշտ, կարեւոր է, թէ ինչ շարունակութիւն կ'ենթադրէ գեկոյցը իրաւաքաղաքա-

կան առումով: Խօսքն այն մասին է, որ քաղաքական առումով ինչպիսին էլ լինի գեկոյցը, լինելու է դրա վերաբերեալ բուռն եւ թէժ ներքին բանավէճ, վէճ, քննարկութեամբ: Տուեալ պահին կարեւորը դիտուած է թերեւս հենց դա, ու դա է, որ թելադրելու է աշնան, իսկ գուցէ նաեւ ձմրան քաղաքական օրակարգը:

Դարձեալ, իհարկէ ոչ բացարձակ, սակայն գերակա իմաստով, թէ՛կողմ չարակից էֆեկտով: Բանն այն է, որ Ապրիլեան քառօրեայ պատերազմը իրականում շատ լայն ռազմա-քաղաքական զարգացումների եւ շերտերի ճակատագրական հոսք եւ ամբողջութիւն է՝ մինչ պատերազմը, ու նաեւ դրանից յետոյ շարունակուած: Եւ այդ համատեքստում տեղի են ունեցել ներքին ու արտաքին շատ այլ էական իրադարձութիւններ, ձեւաւորուել են այդ ամէնի համար պատասխանատուութիւնից բխող ներհամակարգային փոխյարաբերութիւնները Հայաստանի կառավարող նախկին համակարգի տարբեր սուբեկտների, դերակատարների միջոց:

Դրանով հանդերձ, Ապրիլեան քառօրեան իր լայն ընդգրկմամբ, ինչի մասին առիթ ենք ունեցել խօսելու շատ անգամ, ներառում է նաեւ արտաքին յարաբերութիւնների մեծ շրջանակ՝ առաջին հերթին, բնականաբար, Հայաստան-Ռուսաստան յարաբերութեան, ռեգիոնալ ռուսական քաղաքականութեան տիրոջ թուում, սակայն ոչ միայն: Ընդ որում, այդ շրջանակը ներառում է ոչ թէ ներհամակարգային յարաբերութիւններից կտրուած, առանձին, այլ ընդհանուր շրջանակում կապակցածութեան մէջ: Ի վերջոյ՝ Ապրիլեան քառօրեայ շրջանակում պէտք է ներառել Եւրասիացի մեծամասնութեան գոր-

ծընթացը Արեւելեան գործընկերութեան ԵՄ ծրագրի համատեքստում, դրա ընդհատումը, Եւրասիական միութեան անդամակցումը: ԵՄ Արեւելեան գործընկերութեան ծրագրի ու Եւրասիացի մեծամասնութեան հարցը գուցէ պէտք է կտրել դրան նախորդած հայ-թուրքական ֆուտպոլային դիւանագիտութիւնից եւ դրա տապալումից:

Միաժամանակ, Ապրիլեան քառօրեան գուցէ պէտք է կտրել ԵՄ հետ համապարփակ համաձայնագրի ստորագրումից, որից առաջ յաջողուեց չէզոքացնել Հայաստան-ԵՄ ճգնաժամն ու հասնել ստորագրման՝ 2017-ի Նոյեմբերին: Իսկ վերը թուարկուած արտաքին զարգացումները ուղեկցուել են Հայաստանի ներսում ներհամակարգային մի քանի թեւերի տարբեր ձեւաչափերի դիմակայութեամբ եւ գործակցութեամբ: Ահա այդ տեսանկիւնից, Ապրիլեան քառօրեայ պատերազմի հանգամանքները օրակարգային հարց են, որոնք կարող են բացուել անընդամաք, գրեթէ անվերջ, շերտ առ շերտ: Իսկ հաշուի առնելով այն, որ Հայաստանում «թէժ աշնան» օրակարգով շահագրգռուած են ոչ միայն նախկին կառավարող համակարգի առանցքային դերակատարներ, այլ նաեւ նրանց գործընկերներ ռուսական տնտեսա-քաղաքական տիրոջ թից, պարզ է դառնում, թէ Քառօրեայ պատերազմի թեման դիմադրունակութեան ու ճկունութեան ինչպիսի միջոց է Հայաստանի քաղաքական ղեկավարութեան համար, եւ Նիկոլ Փաշինեան ինչու այդ միջոցը նախաձեռնելու մասին յայտարարեց 2019-ի Մայիսին՝ Ռոբերտ Քոչարեանի կալանքից ազատ արձակուելու առիթով:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՈՒԹԵՐԹ՝
ՍՈՅՐԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգային ժողովը Ընտրեց Առաջադրուած Երեք Թեկնածուները՝ ՍԴ-ի Դատաւորներ



Սահմանադրական դատարանի (ՍԴ) երեք նոր դատաւորները

Ազգային ժողովը Սեպտեմբեր 15-ին ընտրեց բոլոր երեք թեկնածուները՝ Երուսաղիմ խոնդկարեան, Էտկար Շաթիրեան եւ Արթուր Վաղարշեան: Խոնդկարեանի թեկնածուութիւնը առաջադրած էր Դատաւորներու ընդհանուր ժողովը, Վաղարշեանինը՝ նախագահը, Շաթիրեանինը՝ կառավարութիւնը:

Ընդդիմադիր երկու խմբակցութիւնները քուէարկութեան, ինչպէս յայտարարած էին երէկ, չմասնակցեցան:

«Սահմանադրական դատարանի համար առաջադրուել է Երուսաղիմ խոնդկարեանի թեկնածութիւնը, իսկ ձայները բաշխուել են հետեւեալ կերպ՝ կողմ՝ 84, դէմ՝ 2: Սահմանադրական դատարանի դատաւորի ընտրութեան համար առաջադրուել է Արթուր Վաղարշեանի թեկնածութիւնը, քուէատուփում առկայ էր 88 քուէարկութիւն, որոնցից անվաւեր ճանաչուեց մէկը, իսկ ձայները բաշխուել են հետեւեալ կերպ՝ կողմ՝ 86, դէմ՝ 1: Սահմանադրական դատարանի դատաւորի ընտրութեան համար առաջադրուել է Էտկար Շաթիրեանի թեկնածութիւնը, ազնուութիւնը, անմիջականութիւնը մեզ վստահութիւն ներշնչեց»: Այս մասին Ազգային ժողովին մէջ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին յայտարարեց Աժ-ի փոխխօսնակ Ալեն Սիմոնեան՝ անդրադառնալով այն հարցին, թէ ի՞նչ դրդապատճառով երկրորդ անգամ ընտրեցին Արթուր Վաղարշեանը:

Կը Բացառեն, Որ ՍԴ-ի Նոր Նախագահ Ընտրուի Թովմասեանը. Ալեն Սիմոնեան

«Արթուր Վաղարշեանի անկեղծութիւնը, ազնուութիւնը, անմիջականութիւնը մեզ վստահութիւն ներշնչեց»: Այս մասին Ազգային ժողովին մէջ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին յայտարարեց Աժ-ի փոխխօսնակ Ալեն Սիմոնեան՝ անդրադառնալով այն հարցին, թէ ի՞նչ դրդապատճառով երկրորդ անգամ ընտրեցին Արթուր Վաղարշեանը:

Ինչ կը վերաբերի երեք թեկնածուներու ընտրութեան եւ իրենց հասցէին հնչող քննադատութիւններուն, թէ դաւաճանեցին լեղափոխութիւնը, Սիմոնեան կ'ըսէ, թէ ի սկզբանէ ըսած են, որ չեն ուզեր ունենալ ՍԴ, որ պիտի ըլլայ խամաճիկային կամ պատկանի իշխանութեան, այլ իշխանութիւնը պիտի ձեւաւորէ ՍԴ, որ պիտի ըլլայ նոր, պիտի ըլլայ սկզբունքային:

«Ես չեմ համարում, որ այստեղ որեւէ մէկին դաւաճանել ենք: Պէտք է հասկանալ, թէ ովքեր են այդ խօսացողները: Ես վստահեցնում եմ, որ ինչ թեկնածու էլ բերէինք, մշտապէս լինելու են տարբեր շահեր: Տարբեր պատգամաւորներ, հրապարակախօսներ, վերլուծաբաններ մշտապէս ունենում են իրենց պատկերացումները»: Չարցին, թէ ասով հանգուցալուծուեցա՞ւ ՍԴ-ի ճգնաժամը, Ալեն

ժուլիւնը, նրա ազգանունն ընդգրկուել է գաղտնի քուէարկութեան քուէարկութիւնում. կողմ՝ 85, դէմ՝ 3», - յայտարարեց Վահագն Մակուչեանը:

Ընտրուած դատաւորները իրենց լրագրութիւնը կը ստանձնեն Աժ-ի մէջ երդման արարողութենէն յետոյ: Այսօր թեկնածուները երդում չտուին, քանի որ անոնցմէ երկուքի պարագային աշխատանքի հետ կապուած անհամատեղ լիութեան խնդիր կար:

«Թեկնածուները, արդէն դատաւորները պէտք է դիմում գրեն իրենց աշխատանքից դուրս գալու վերաբերեալ, որից յետոյ մենք կը կազմակերպենք երդման արարողութիւնը այստեղ», - ըսաւ Ազգային ժողովի նախագահ՝ Արարատ Միրզոյեան:

ՍԴ-ի թափուր տեղերը առաջացան Յունիսին ընդունուած սահմանադրական փոփոխութիւններու ընդունուելէն յետոյ, երբ ՍԴ-ի նախագահի պաշտօնէն հեռացուեցաւ Հրայր Թումվանեանը եւ իրենց պաշտօնը կորսնցուցին 12 տարիէն աւելի պաշտօնավարած երեք դատաւորները:



Աժ-ի փոխխօսնակ Ալեն Սիմոնեան

Սիմոնեան արձագանքեց «Դեռ շատ ժամանակ կայ անցնելու, դեռ շատ անելիքներ ունենք ոչ միայն ՍԴ-ում, այլ ամբողջ դատական համակարգում»: Ալեն Սիմոնեան բացառեց, որ ՍԴ-ի նոր կազմին կողմէն կրկին նախագահ կ'ընտրուի Հրայր Թումվանեանը:

Ալեն Սիմոնեան հերքեց այն լուրերը, թէ գործադիր իշխանութենէն ճնշումներ կամ յորդորներ եղած են քուէարկելու այս թեկնածուներու օգտին:

Արայիկ Յարութիւնեան Ունի Մեր Խնքակցութեան Լիակատար Աջակցութիւնը. Մխիթար Յայրապետեան

Կրթական բարեփոխումները երբեք որեւէ երկրի մէջ հեշտութեամբ չեն տրուած. բնական է, որ պիտի ըլլայ աղմուկ, բայց շատ կարեւոր է, որ խօսինք բովանդակութեան շուրջ: Այս մասին Սեպտեմբեր 14-ին, Աժ-ի մէջ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին նշեց Աժ «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր՝ Մխիթար Յայրապետեան:

Չարցին, թէ ինչպէս կը գնահատէ կրթութեան Գիտութեան Մշակութի եւ Սփորթի նախարար Արայիկ Յարութիւնեանի գործունէութիւնը, ան պատասխանեց. «Շատ ուժեղ փորձում են օգտուել այս իրավիճակից, թիրախաւորել են գործընկերոջս եւ մոռացել են, որ պէտք է խօսենք բովանդակութեան շուրջ: Արայիկ Յարութիւնեանն ունի մեր խմբակցութեան լիակատար աջակցութիւնը: Մենք մեր մասով առաւելագոյնը անելու ենք, որ առողջ քննադատութիւնը առաւելագոյն լսելի լինի կառավարութեան համար:

Կան բազմաթիւ քննարկումներ, խնդիրներ, որոնց շուրջ մենք ունենում ենք գրոյցներ գործադիրի մեր գործընկերների հետ եւ մեր վէճը բացառապէս գաղափարական է»: Լրագրողներուն հետ զրոյցին նշեց Աժ «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր Մխիթար Յայրապետեան՝ անդրադառնալով անոր, որ «Իմ քայլը» պատգամաւոր Արսէն ձուլֆալաքեանը յայտարարած է մանտաթէն հրաժարելու մասին՝ վկայակոչելով հակասութիւնները ԿԳՄՍ նախարարու-



«Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր՝ Մխիթար Յայրապետեան

թեան հետ: «Կայ առողջ համագործակցութիւն Աժ-ի եւ կառավարութեան միջեւ: Պարոն ձուլֆալաքեանը հանդէս է եկել յայտարարութեամբ, ես իրաւունք չեմ վերապահի ասել աւելին, քան ասել է ինքը: Ես յոյս ունեմ, որ իր որոշումը կը փոխուի: ձուլֆալաքեանի հեռացումը խորհրդարանից կը վնասի թէ ոլորտին, թէ մեր յանձնաժողովին: Նա եղել եւ մնում է ոլորտի լաւագոյններից մէկը, փայլուն պատգամաւոր: Որեւէ մէկը չի շահելու, եթէ պարոն ձուլֆալաքեանը դնի մանտաթը: Ես իր հետ հանդիպել եմ, յորդորել եմ, որ վերանայի իր որոշումը»:

Քոչարեանի Քաղաքականութիւն Վերադառնալու Միակ Ծանապարհը Դատաքննութիւնը Չխոչընդոտելն Է. Անդրանիկ Քոչարեան

Այն, որ դատաւարութիւնը ՀՀ երկրորդ նախագահ՝ Ռոպերթ Քոչարեանի եւ անոր պաշտպանական կազմի թեթեւ ձեռքով վերածուած է զաւեշտի, այդ արդէն 1.5 տարի է բոլորս համոզուած ենք: Այս մասին Սեպտեմբեր 9-ին, Ազգային ժողովին մէջ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին ըսաւ Աժ-ի պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարեան:

«Ռոպերթ Քոչարեանը փոխանակ գնայ դատաքննական փուլ եւ փորձի իր առջեւ դրուած մեղադրանքների բացատրութիւնները կարողանայ դատաքննութեան ընթացքում կամ հերքեն, կամ ապացուցեն, Ռոպերթ Քոչարեանը վերցրել է այլ մարտավարական, իրաւական գործընթաց. Խափանման միջոցների անվերջ շրջապտոյտների միջոցով եւ ոնց որ թէ դատաւորին սկսել է դա դուր գալ այն աստիճանի, որ Ռոպերթ Քոչարեանն իր վերջին դարակազմիկ հանդիպման ընթացքում ասաց՝ երեքշաբթի օրերն իր օրակարգից ջնջել է: Շաբաթն ունի եօթ օր, որի մէջ նաեւ երեքշաբթին է, չորեքշաբթին է, հինգշաբթին է եւ այլն: Ինքը մի շատ տարօրինակ բան էլ ասաց, որ չի հասկանում՝ իրեն ինչի մէջ են մեղադրում: Էդ դէպքում մեղադրանք կայ Պաշտպանութեան նախարարի եւ Գլխաւոր



Աժ-ի պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Քոչարեան

շտաբի պետի հասցէին: Ինքը չգիտի՞ նրանց ինչի են մեղադրում: 0038 հրամանն օրից է եկել», - ըսաւ Քոչարեան:

Անդրանիկ Քոչարեանի խօսքով՝ կամ դատաւորը պէտք է իրեն ընձեռուած իրաւասութիւններու ծիրէն ներս, արագօրէն մտնէ դատաքննական փուլ, կամ Ռոպերթ Քոչարեանը պէտք է չխօսի քաղաքականութիւն վերադառնալու մասին. «Որովհետեւ իր քաղաքականութիւն վերադառնալու միակ ճանապարհը դատաքննութեան գործընթացը չխոչընդոտելն է»:

ԼՈՒՐԵՐ

Վարչապետ Փաշինեան Խնձորեսկի մէջ Մասնակցած Է Սպարապետի Օրուան Նուիրուած Միջոցառումներուն



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Միսիթար Սպարապետի գերեզմանին առջեւ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան այցելած է Միւնիքի մարզ եւ Խնձորեսկ համայնքին մէջ մասնակցած է Սպարապետի օրուայ առթիւ կազմակերպուած տօնական միջոցառումներուն: Վարչապետին ընկերակցած են Պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը, Տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքներու նախարար Սուրէն Պապիկեանը եւ Միւնիքի մարզպետ Յունան Պօղոսեանը:

Փաշինեան նախ այցելած է Միսիթար Սպարապետի գերեզման՝ ծաղիկներ գետեղած է Սպարապետի շիրիմին եւ յարգանքի տուրք մատուցած անոր յիշատակին: Այնուհետեւ տեղի ունեցած է առանձին զրահատանկային գումարտակի 15 ծառայողներու զինուորական երգման արարողութիւնը, ընթացքում է Սպարապետի խօսքը եւ հնչած է Հայաստանի Հանրապետութեան պետական օրհներգը:

«Հայաստանի Հանրապետութեան Զինուած ուժերի զինծառայողներ, շնորհաւորում եմ ձեզ զինուորական երդումն ընդունելու կապակցութեամբ», ողջոյնի խօսքին մէջ ըսած է վարչապետը, ապա անհատապէս շնորհաւորած՝ զինուորներուն:

Նիկոլ Փաշինեան քալած է Խնձորեսկի ճօճուղ կամուրջով եւ դիտած՝ կամուրջի յարակից տարածքին Սպարապետի օրուայ առթիւ պատրաստուած երաժշտական

ցուցադրական ելոյթները:

Վարչապետը այնուհետեւ այցելած է Խնձորեսկի համայնքապետարանի յարակից տարածք, ուր իրեն դիմաւորած են ջերմ ծափող-ջուջներով: Վարչապետը եւ բարձրաստիճան հիւրերը ծաղիկներ դրած են Հայրենական մեծ պատերազմի եւ Արցախեան ազատամարտի ընթացքին զոհուած հերոսներու յիշատակը յաւերժացնող յուշակոթողներուն, ապա ներկայացուած են ցուցադրական ելոյթներ: Վարչապետը գրուցած է բնակիչներու հետ եւ շնորհաւորած է անոնց՝ Սպարապետի օրուայ առթիւ:

Կառավարութեան ղեկավարը Տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքներու նախարար Սուրէն Պապիկեանի եւ Միւնիքի մարզպետ Յունան Պօղոսեանի ուղեկցութեամբ այցելել է նաեւ Գորիս, ուր ծանօթացած է քաղաքի զբօսաշրջային ենթակառուցուածքներու զարգացման, մասնաւորապէս Հին Գորիսի վերականգնման ընթացքին:

Վարչապետը շրջած է նաեւ Հին Գորիս պատմամշակութային կեդրոն՝ ծանօթանալով հոն կտարուող վերականգնման աշխատանքներու ընթացքին: Նիկոլ Փաշինեան կարեւոր նկատած է իրականացուող ծրագիրները, որոնք նոր ազդակ կը հաղորդեն Գորիսի մէջ զբօսաշրջութեան զարգացման ու քաղաքի գրաւչութեան բարձրացման:

13 Օդանաւային Ընկերութիւններ Կանոնաւոր Թռիչքներ Կը Սկսին Դէպի Հայաստան

«Զուարթնոց» օդակայանը հրապարակած է այն օդանաւային ընկերութիւններու ցանկը, որոնք արդէն իսկ վերսկսած են կամ շուտով կը վերսկսին կանոնաւոր թռիչքներ:

Aeroflot Russian Airlines -ը Մոսկուա-Երեւան-Մոսկուա երթուղիով թռիչք կը կատարէ իւրաքանչիւր հինգշաբթի եւ շաբաթ օրերը, իսկ Սեպտեմբեր 27-էն կը կատարէ նաեւ կիրակի օրերը:

Air France -ը Փարիզ-Երեւան-Փարիզ երթուղիով թռիչքներ կը կատարէ երեքշաբթի, ուրբաթ եւ կիրակի օրերը:

Austrian Airlines -ը Վիեննա-Երեւան-Վիեննա երթուղիով թռիչքներ կը կատարէ երկուշաբթի, չորեքշաբթի եւ շաբաթ օրերը, իսկ Հոկտեմբեր 2-էն կը կատարէ նաեւ ուրբաթ օրերը:

Belavia-ն Մինսք-Երեւան-Մինսք երթուղիով թռիչքներ կը

կատարէ ամէն օր:

Fly Dubai-ի Տուպայ-Երեւան-Տուպայ երթուղիով թռիչքներ կը կատարուին երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ եւ կիրակի օրերը:

Middle East Airlines-ի Պէյրութ-Երեւան-Պէյրութ երթուղիով թռիչքներ կը կատարուին շաբաթ օրերը:

Qatar Airways-ը Տոհա-Երեւան-Տոհա երթուղիով թռիչքներ կը կատարէ երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ, շաբաթ եւ կիրակի օրերը:

Sky Up-ը Քիեւ-Երեւան-Քիեւ երթուղիով թռիչքներ կը կատարէ երկուշաբթի եւ ուրբաթ օրերը:

Ukraine International Airlines-ը Քիեւ-Երեւան-Քիեւ երթուղիով թռիչքներ կը կատարէ երեքշաբթի, ուրբաթ եւ շաբաթ օրերը:

Air Cairo-ն Սեպտեմբեր 17-ին կը վերսկսի Շարմ Ալ Շէյխ-Երեւան-Շարմ Ալ Շէյխ երթուղիով թռիչքները, որոնք կը կատարուին

ԵԱՀԿ Մինսքի Խումբի Միջնորդները Հանդիպման Կը Հրաւիրեն Հայաստանի Եւ Ատրպեյճանի ԱԳ Նախարարները

Համաձայնագրահանրուող նպատակ ունին վերսկսելու «առանց նախապայմաններու լուրջ առարկայական բանակցութիւնները»:

ԵԱՀԿ (Եւրոպայի մէջ Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութիւն) Մինսքի խումբի համաձայնագրահանրուող շեֆերը, Իկոր Փոփովը եւ Ստեֆան Վիսթրոյթին, ինչպէս նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ՝ Անձէյ Քասիչիքը խտացուած խորհրդակցութիւններ կատարած են Սեպտեմբեր 14-ին, Փարիզի մէջ:

ԵԱՀԿ-ի հաղորդագրութեան համաձայն, համաձայնագրահանրուող քննարկած են իրավիճակը տարածաշրջանին, յատկապէս ուշադրութեան կեդրոնը պահելով նոր զարգացումները, Յուլիսի կէսերուն Հայաստանի եւ Ատրպեյճանի սահմանին վրայ տեղի ունեցած մագլցումէն յետոյ: Միջնորդները մանրակրկիտ քննարկած են գնահատած են կողմերու մասնաւոր եւ հրապարակային ուղերձները, նշուած է հաղորդագրութեան մէջ:

Քասիչիքը ներկայացուցած է անվտանգային իրավիճակը տեղում գիտնին վրայ, համաձայնագրահանրուող ողջունած են անոր յստակ նախապատրաստութիւնները դիտարկման գործունէութիւնը վերսկսելու ուղղութեամբ:

Միջնորդները առանձին հեռախօսակցութիւններ ունեցած են Հայաստանի եւ Ատրպեյճանի արտաքին գործոց նախարարներ՝ Զօհրապ Մնացականեանի եւ ձէյհուն Պալաթովի հետ ու հրաւիրած առաջիկայ շաբաթներուն անհատապէս հանդիպելու իրենց հետ՝ դիրքորոշումներու հետագայ յստակացման համար, «առանց նախապայմաններու լուրջ առարկայական բանակցութիւնները վերսկսելու նպատակով»:

«Համաձայնագրահանրուող աշխուժօրէն ու ամբողջութեամբ ներգրաւուած կը մնան խաղաղ եւ համապարփակ կարգաւորման համար բանակցութիւնները դիւրացնելու գործին մէջ, ԵԱՀԿ-ի իրենց մասնաւոր համապատասխան», - նաեւ նշուած է հաղորդագրութեան մէջ:

Վարչապետը Հիւրընկալած Է Արժանօրինակ Բարերար՝ Էտուարտո Էռնէկեանը



Վարչապետ Նիկոլ Փաշինեան հիւրընկալած է Հայաստանի ազգային հերոս, արժանիքնահայ գործարար, բարերար էտուարտօ Էռնէկեանը:

Վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութիւնը կը յայտնէ, որ Փաշինեան հանդիպման ընթացքին նշած է. «Ուրախ եմ, որ Դուք «Քորոնա» ժահրի պայմաններում եւ դրա հետեւանքով ստեղծուած իրավիճակում նոյնպիսի ոգեւորութեամբ էք վերաբերուում Հայաստանում ներդրումային ծրագրեր իրականացնելու հնարաւորութիւններին: Ձեր կողմից իրականացուած նախկին ծրագրերը յաջողութեամբ իրականացուում են, ինչն, ի հարկէ, ուրախալի է մեզ համար: Համոզուած եմ, որ այս համագործակցութիւնն աւելի տեսանելի արդիւնքներ կը բերէ Հայաստանի Հանրապետութեանը»:

Էռնէկեան ըսած է, որ հետեւ-

ողականօրէն պիտի շարունակէ հայրենիքին մէջ տարբեր ոլորտներէ ներս ներդրումային ծրագրերը եւ կարեւորած է ՀՀ կառավարութեան հետ սերտ համագործակցութիւնը:

Վարչապետը եւ արժանիքնահայ գործարարը քննարկած են Հայաստանի մէջ «Արմենիա» միջազգային օդակայաններ ՓԲ Ընկերութեան կողմէ կատարուող ծրագրերը: Մասնաւորապէս, անդրադարձած են ընկերութեան կառավարման տրուած Երեւանի «Զուարթնոց», Կիւմրիի «Շիրակ» օդակայաններու զարգացման, ենթակառուցուածքներու բարելաւման, վերանորոգման եւ հետագայ շահագործման վերաբերող հարցերուն: Զրուցակիցները մտքեր փոխանակած են նաեւ էտուարտօ Էռնէկեանին պատկանող ընկերութիւններու կողմէ Հայաստանի մէջ կատարուող եւ առաջիկային նախատեսուող այլ ձեռնարկատիրական ծրագրերը:

հինգշաբթի եւ կիրակի օրերը:

AMC Airlines-ը Սեպտեմբեր 19-ին կը վերսկսի Շարմ Ալ Շէյխ-Երեւան-Շարմ Ալ Շէյխ թռիչքները, որոնք կը կատարուին իւրաքանչիւր շաբաթ օր:

Armenia Airways-ի Երեւան-Թեհրան-Երեւան երթուղիով թռիչքները

կը վերսկսին Սեպտեմբեր 20-ին եւ կը կատարուին երեքշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ եւ կիրակի օրերը:

Air Arabia-ի Շարժա-Երեւան-Շարժա երթուղիով թռիչքները կը վերսկսին Հոկտեմբեր 11-էն եւ կը կատարուին չորեքշաբթի, ուրբաթ եւ կիրակի օրերը:

Շաբթուայ Օրագիրը Փաշինեանի Վարկանիշը, Թրամփի Երրորդ Շրջանը եւ Լիբանանի Ապագան

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

Ամերիկայի նախագահ ՏԱՆՈՒՏ ԹՐԱՄՓ Նեվադա նահանգին մէջ իր կողմնակիցներուն հետ ընտրական հանդիպումի մը ընթացքին յայտարարեց, որ ինք պիտի յաղթէ յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն, որմէ ետք պիտի «բանակցի» երրորդ շրջան մը եւս վերընտրուելու համար, հակառակ որ, ըստ սահմա-



նադրութեան նախագահի ժամկետը միայն երկու շրջան է:

Թրամփի այս յայտարարութեան եթէ գումարենք անոր գործակից ՌՈՃԸՐ ՍԹՈՆԻ հրապարակային խորհուրդը նախագահին՝ ընտրութիւններուն պարտուելու պարագային ռազմական դրութիւն հռչակելու եւ ընդդիմախօսները ձերբակալելու մասին, իսկապէս որ մտահոգուելու պատճառ ունի Ամերիկան:

Հայաստանի վարչապետ ՆԻԿՈՂ ՓԱՇԻՆԵԱՆԻ վարկանիշը, ըստ ընդդիմադիր մամուլին եւ շրջանակներուն, իջած է 17,2 տոկոսի: Այս թիւը թմբկահարելով նոյն մարդիկ կը վկայակոչեն «ներքին հարցախոյզեր», որոնք իբրեւ թէ կատարուած են երեք տարբեր կազմակերպութիւններու կողմէ եւ երեքն ալ տուած են նոյն արդիւնքը:



Եթէ իսկապէս փաշինեանի վարկանիշը այդքան ցած է, ընդդիմադրութիւնը օր առօրէ պէտք է ժողովուրդը հաւաքէ Հանրապետութեան հրապարակը եւ յաջող-

նէ ի՛ր յեղափոխութիւնը:

Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան նախագահ ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ կը շարունակէ նախապատրաստուիլ իր խոստացած «մեծ հանրահաւաքին»: Այս շաբաթ համախոհներուն հետ հանդիպումի մը ընթացքին իրեն յիշեցուցած են երեք ամիս ետք սպասուող սովի մասին՝ Յունիսին իր կատարած յայտարարութիւնը:

Ծառուկեանի պատասխանը բաւական ուշադրաւ է՝ Հայաստանի ամենէն հարուստ մարդոցմէ մէկուն մտային կարողութիւնը հասկնալու համար: «Ես այդ մասին խօսեցայ Յունիսի 5-ին, որմէ անցած է երկու ամիս» ըսած է Ծառուկեան:



Ուզպէքիստանի նախկին նախագահի դուստր՝ ԿԻԻԼՆԱՐԱ ՔԱՐԻՄՈՎԱՆ մեղադրուած է կաշառակերութեան մէջ ու անոր պատուանդ ունեցուածքը բռնազանձելու որոշում կայացուած է: Այս ուղղութեամբ Ուզպէքիստանը եւ Զուիցերիան համաձայնութեան եկած են՝ Քարիմովայի անունով Զուիցերիոյ դրամատուներուն մէջ պահ դրուած 131 միլիոն տոյարը Ուզպէքիստանի կառավարութեան վերադարձնելու ուղղութեամբ:

Այս համաձայնութիւնը կրնայ օրինակ ծառայել Հայաստանի իշխանութիւններուն քայլեր ձեռնարկելու՝ նախկին ռեժիմի անդամներուն կողմէ պետութեան գողցած եւ Զուիցերիական դրամատուներու գաղտնի հաշիւներուն մէջ պահ դրուած գումարները վերադարձնելու ուղղութեամբ:

Բաց հասարակութեան հիմնադրամներ՝ կամ Սորոսի կազմակերպութեան Հայաստանի նախագահ ԼԱՐԻՍԱ ՄԻՆԱՍԵԱՆ հարցազրոյց ունեցած է Հանրային հեռատեսիլի հաղորդավար ՊԵՏՐՈՍ ՂԱԶԱՐԵԱՆԻ հետ: Սորոսականներու մասին անդադար հնչող մեղադրանքներուն անդադառնատով Տիկ. Մինասեան յիշած է



բազմաթիւ անուններ այն մարդոց, որոնք տարբեր տարիներուն գումարներ ստացած են իր գլխաւորած կազմակերպութեան եւ այժմ կը մեղադրեն ներկայ իշխանութիւնները «սորոսականութեան» մէջ:

Սորոսի հիմնադրամէն գումարներ ստացած են Հայկ Բաբուխանեանը, Լեւոն Մարտիրոսեանը, Արա Բաբլոյեանը, Յասմիկ Պողոսեանը, Գագիկ Յարութիւնեանը, Արթուր Զաքիւնեանը, Գէորգ Կոստանեանը, Լիլիթ Գալստեանը եւ բազմաթիւ ուրիշներ, որոնք բոլորն ալ կապ ունին նախկին իշխանութիւններուն հետ:



Յունաստանի նախագահ ՔԱԹԵՐԻՆԱ ՍԱՔԵԼԱՐՈՊՈՒԼՈ CNN-ի հետ զրոյցի ընթացքին խօսած է Միջերկրական ծովուն մէջ թուրք-յունական լարուածութեան մասին: Յունաստանի նախագահը յայտնած է, որ Ֆրանսայէն ձեռք բերուած «Rafale» ռազմական ինքնաթիռ-

ները ուղերձ են նաեւ թուրքիային: «Եթէ խաղաղութիւն կ'ուզենք, պիտի աւելի պատրաստ ըլլանք պատերազմի», ինքնավստահ ըսած է Յունաստանի նախագահը, այժմ որ Եւրոպական երկիրներուն միացաւ նաեւ Միացեալ Նահանգները, զգուշացնելով թուրքիոյ նախագահին՝ զսպելու իր ախորժակները:



Լիբանանի Շիա համայնքի ղեկավարներ՝ Հրզպալլաի առաջնորդ ՀԱՍՍՆ ՆԱՍՐԱԼԼԱ եւ Խորհրդարանի նախագահ՝ ՆԱՊԻՀ ՊԸՐԻ ԼԵԼԻ կու տան որ, ժամանակն է փոփոխութեան ենթարկելու երկրի Ազգային Ուխտը, որու համաձայն իշխանութիւնը հաւասարապէս բաժնուած է Քրիստոնեաներուն եւ Մահմետականներուն միջեւ:

Նկատի ունենալով որ Քրիստոնեաներու թիւը նուազած է եւ Շիա համայնքը դարձած է մեծամասնութիւն, անոնք կ'առաջարկեն որ, իշխանութիւնը բաժնուի երեքի եւ իսլամ Շիաները, իսլամ Սիւնիները եւ Քրիստոնեաները՝ իւրաքանչիւրը ունենան իշխանութեան մէջ մէկ երրորդ բաժին:

Ի պատասխան՝ Քրիստոնեայ շրջանակներ կը զգուշացնեն, որ նման քննարկում սեղանի վրայ դրուելու պարագային, իրենք ալ պիտի պահանջեն Հրզպալլայի շուկատներու գլխաթափումը եւ ֆետրալ պետութեան ստեղծումը՝ որպէսզի իւրաքանչիւր համայնք վարէ իր շրջանի ներքին գործերը:

Անկախութեան 29-ամեայ ճանապարհը

Շարունակուած էջ 1-էն

ջին տարիներու ժողովրդավարական նուաճումները, որոնք փոխարինուեցան միապետական կառավարմամբ: Այդ տարիները եղան ամենէն ծանրը ու վնասարարը Հայաստանի համար: Ժողովուրդը ընդհանրապէս կորսնցուց հաւատքը Հայրենիքի նկատմամբ, սակայն պայքարելու եւ իր երկրին տէր դառնալու նպատակն ու հեռանկարը մնաց վառ բոլորի մօտ:

2018-ի Ապրիլ-Մայիսին, Հայ ժողովուրդը վերջապէս հասաւ իր նպատակին ու հարիւր հազարներով փողոց իջնելով ու հրապարակները ողողելով տապալեց վախի ու կեղծիքի վրայ հիմնուած նախկին փտած վարչակարգը: Թաւշայ յեղափոխութեան յաղթանակով նոր էջ մը բացուեցաւ անկախ Հայաստանի առջեւ: Վերջապէս, իրերը սկսան շարժիլ իրենց տեղէն: Վերահաստատուեցան ժողովրդավարութիւնն ու ազատութիւնները, ազատ եւ արդար ընտրութիւններով ձեւաւորուեցաւ իշխանութիւն, կաշառակերութեան եւ մեծաշնորհներու դէմ պայքարը սկսաւ տալ իր առաջին պտուղները:

րը եւ արտագաղթը որոշ չափով դանդաղեցաւ ու բոլորի մօտ սկսաւ դարձեալ տիրել լաւատեսութիւն:

Վերջին վեց ամիսներուն Քորոնա ժահրի համաճարակը եկաւ ցնցելու երկրագունդի ամբողջ մարդկութիւնը: Հարց պետութիւններն անգամ անկարող դարձան կասեցնելու տարածուող հիւանդութեան ալիքը: Հայաստան անմասն չմնաց այս բոլորէն ու սկսաւ դիմագրաւել նոր դժուարութիւնները, անոնց առողջապահական ու տնտեսական բաղադրիչներով:

Հայաստանի անկախութեան տարեդարձի սեմին, յոյսով ենք որ համաճարակը մօտ օրէն կը յաղթահարուի ու բոլորս կը վերադառնանք մեր բնականոն կեանքին ու մեր ժողովուրդը դարձեալ կը բռնէ զարգացման ու յառաջդիմութեան ուղիներն ու յաջող տարի աւելի լաւ ու առողջ պայմաններու տակ կը համախմբուինք Մայր Հայրենիքի երկնակամարին տակ՝ երեւանի սրտին մէջ ազգովին մշտնջենք անկախութեան 30-ամեայ յոբելեանը:

Շնորհաւոր Անկախութեան տարեդարձ մեր բոլորին: «ՄԱՍԻՍ»

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Զօհրապ Մնացականեան Զանդիպած Է

Շարունակուած էջ 1-էն

րու միջեւ կապերի ամրապնդման գործով: Մնացականեան արժեւորած է Եգիպտոսի պատմական դերը եւ ներկայի փորձառութիւնը կրօնական բազմազանութեան եւ

Մերձաւոր Արեւելքի, Հիւսիսային Ափրիկէի եւ Հարաւային Կովկասի մէջ տեղի ունեցող զարգացումներուն անդրադարձած են Հայաստանի արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեանը եւ Արաբական պետութիւններու



Հայաստանի եւ Եգիպտոսի ԱԳ նախարարները համատեղ ասուլիսի ժամանակ

համերաշխութեան պահպանման ու ամրապնդման գործով:

Ջրուցակիցները քննարկած են տարածաշրջանային եւ միջազգային խաղաղութեան եւ անվտանգութեան հարցերու լայն շրջանակ: Այս առնչութեամբ Հայաստանի ԱԳ նախարարը մտահոգութիւն յայտնած է Մերձաւոր Արեւելքի եւ Հարաւային Կովկասի անկայունութիւն արտահանելու փորձերու առնչութեամբ, կարեւորելով խաղաղութեան եւ անվտանգութեան պահպանման միտուած միջազգային համագործակցութիւնը:

Զօհրապ Մնացականեան Եգիպտոսի մէջ, այդ երկրի Արտաքին Գործոց նախարարի հետ համատեղ ասուլիսի ժամանակ, պատասխանելով «Սքայ Նիւզ Արապիա»-ի հարցին, թէ ինչպէ՞ս կը գնահատէ թուրքի վարչապիժը Կովկասի եւ Արեւելեան Միջերկրականի մէջ, եւ արդե՞ք այդ վարչապիժը վտանգ կը ներկայացնէ, թէ՞ ոչ:

«Ի հարկէ մենք ականատես ենք լինում իրենց կողմից ռազմական կուտակման փորձերի: Մենք տեղեկութիւններ ենք ստանում օտարերկրեայ ահաբեկիչ գիներկների օգտագործման մասին, ովքեր տեղափոխուելու են Ատրպէյճան կամ գուցէ արդէն իսկ տեղափոխուել են: Մենք ականատես ենք լինում մեծ ռազմական ներկայութեան, ռազմական ամրապնդման: Այս ամէնը հենց այն գործողութիւններն են, որոնք խաթարում են տարածաշրջանում խաղաղութեանը եւ կայունութեանն ուղղուած ջանքերը», - շեշտած է Հայաստանի ԱԳ նախարարը:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վերաբերեալ Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը ըսած է. - «Մեր հայրենակիցների՝ Արցախի հայերի կարեւոր գոյացական հարցերը շարունակում են մնալ մեր ուշադրութեան կեդրոնում: Մեր ուշադրութիւնը եւ մեր գերակայութիւնները վերաբերում են Լեռնային Ղարաբաղի մեր հայրենակիցների ֆիզիքական անվտանգութեան ապահովմանը եւ կարգավիճակի խնդրին՝ ինքնորոշման իրաւունքի ճանաչմանը եւ դրա իրականացմանը՝ առանց սահմանափակումների: Հանգուցալուծման առումով մեր կարեւորագոյն առաջնահերթութիւնների առանցքում ընկած է անվտանգութիւնը»:

լիկայի գլխաւոր քարտուղար՝ Ահմետ Ապուլ Ղէյթը Գահիրէի մէջ կալցած հանդիպման ժամանակ:

